Հրանտ Մաթևոսյան

Մենք մանկությունից երգել ենք ուրիշի ձայնով

Ինձ շատ է դուր գալիս նրա պատմած պատմություններից մեկը: Դավիթը՝ նրա որդին, շատ փոքր էր, երբ առաջին անգամ Ահնիձոր էին տարել՝ Հրանտի հայրենի գյուղը: Երեխան առաջինը գնաց դեպի շունը: Հովվաշուն էր, մեծ ու օտարներին չէր սիրում, և՛ Հրանտը, և՛ Վերժինեն՝ նրա կինը, վախեցած ձայնեցին երեխային՝ «Կանգ առ, չմոտենաս»: Իսկ Դավիթը հայտարարեց. «Ինչի՞ց եք վախենում, շունն ինձ չի կծի, չէ որ ՄԵՐ շունն է»: «Էդ դու գիտես, որ շունը մերն է, բայց շունը չգիտի, որ դու էլ ես մերը»: Իսկ շունը, պարզվեց, գիտեր: Շունն ակնթարթորեն տղայի մեջ զգաց նրա ՅՈՒՐԱՅԻՆ, ՄԵՐԸ լինելը:
Այս պատմությունը շարունակություն ունի:
Դավիթին դպրոցում շարադրություն են հանձնարարում՝ ըստ Ավետիք Իսահակյանի պատմվածքի: Ութամյա տղան գրում է, որ ամենից շատ իրեն դուր եկավ մարդու ու շան փոխհարաբերությունը, և մանրամասն ու մանրակրկիտ վերլուծում է այդ հարաբերությունները: Ուսուցչուհին զարմանում է՝ երեխան բացահայտել էր սյուժետային մի գիծ, որ չէր նկատել ոչ մի գրականագետ: Հիմա Դավիթը լարի պես ձիգ, բարձրահասակ երիտասարդ է, «սև, արցունքների պես մեծ» աչքերով, հոր պես արտահայտիչ ձեռքերով: Նա սովորում է համալսարանի բանասիրական ֆակուլ-տետում, գրականություն հասկանում է ոչ պակաս, քան մանուկ օրերին: Իսկ նրա հայր Հրանտը, հիշելով այդ պատմությունը, հարցնում է ինձ.
– Դու երբևէ տեսե՞լ ես՝ ինչպես է հորթուկն առաջին անգամ գոմից դուրս գալիս ու սկսում աշխարհը ճանաչել: Նա նայում է շուրջը ու աստիճանաբար, առարկա առ առարկա յուրացնում տեսածը: Ահա թուփը, թփի վրա երկու... ոչ, երեք տերև կա: Կանգնեց, մտածեց, ուսումնասիրեց... ընկալեց: Առաջ գնաց: Տեսնում է՝

ինչ-որ Հրանտ է նստել, գիրքը բռնած: Իսկ ինչո՞ւ են նրա աչքերը շարժվում: Դա սարսափելի չէ՞: Չէ, ոչինչ... թվում է՝ բարի է: Կարելի է առաջ գնալ: Ահա շունը... Եվ հանկարծ սարսափելի վախեցավ: Իսկ շունը, որպեսզի ցույց տա, որ ինքը տեր է, երկու անգամ թափ է տալիս պոչիկը: Հորթուկը սարսափահար փախչում է: Կովը, շան վրայով թռչելով, վազում է հորթին օգնության: Շունը քաղաքավարի մի կողմ է քաշվում ու բարեհոգի տանտիրուհու պես նստում է:
Ես իմ երեխաներին երկար ժամանակով տանում էի հայրական տուն, որպեսզի այդպես սովորեն աշխարհն ընկալել: Իմ կարծիքով դրանից է, որ դարձել են հասկացող, գրագետ ընթերցողներ: Համաշխարհային գրականության ամբողջ բառային ֆակտուրան՝ Աստվածաշնչից մինչև ներկա «գյուղագիրներ», գյուղական կյանքի ծնունդ է: Մարդն ինչ էլ կարդա, գյուղը նրան սովորեցնում է գրականության ընկալման այդ այբուբենը՝ ա–այգի, բ–բոռ, գ–գետ: Դու քաղաքաբնակ ես ու քեզ համար ջորին ուրիշ իմաստ ունի, ինձ համար՝ ուրիշ: Ես ջորու մասին ամեն ինչ գիտեմ՝ ինչ տեսք ունի, ինչ է ուտում, ինչպես է քնում, ինչպես են լծում:
– Դուք գրել եք. «Առասպելի ջրհեղեղը եթե կրկնվեր՝ Նոյան պես կարող էի վերստեղծել հողագործության ու անասնապահության մեծ մշակույթները…»: Մտածո՞ւմ էիք, երբ «սովորում էիք», ապրում էիք Ձեր «այբուբենը», որ այդ իմացությունները Ձեզ հետո ուղղակի, ֆիզիկական իմաստով պետք են գալու:
– Ինչպես ասեմ... Առաջին անգամ ազատություն զգացի, երբ քաղաք գնացի, 1950 թվականին: Ինձ համար ազատություն էր ազատագրումն այն ամենից, ինչ թվում էր մայրական դաժանություն: Մայրս ծնունդով փոքր քաղաքից էր, իսկ ամուսնացել էր խուլ գյուղում. մի օրվա ձիու ճանապարհ հեռավորության վրա: Եվ նրա մեջ ապրում էր ճակատագրից նեղացածությունը: Նա ցանկանում էր, որ ես իրականացնեմ իր չիրականացած հնարավորությունները, և նա ինձ ուրիշ կյանքի համար էր պատրաստում: Նա մեզ երեքիս էլ ուրիշ կյանքի էր պատրաստում, բայց ես ավագն էի ու պիտի ճանապարհ հարթողը լինեի: Մորս համար ամենակարևորը իմ լավ սովորելն էր: Նա դառը լացում էր, երբ ես «երկուս» էի ստանում: Մայրս ուրախանում էր՝ տեսնելով իմ լավ ձեռագիրը՝ ինքը գրել չգիտեր:
Ես գրող դարձա մորս շնորհիվ: Ի՜նչ մայր ունեի... Այդպիսի հիանալի պատմող ոչ մի տեղ չես գտնի: Ի՜նչ կերպարներ էր ստեղծում, ինչ իրավիճակներ՝ մեկը մեկից կենդանի, անկաշկանդ, ազատ: Եվ բոլորը ստույգ, ճշգրիտ, դիպուկ:

Մայրս ասում էր՝ թռչունները ամենաշատը գարնանն են երգում, երբ ձագուկներն են հայտնվում, նրանց համար են երգում: Մենք մորս համար ձագուկներ էինք, իսկ նա մեզ համար մեր ծմակուտում մշակույթի աշխարհ էր՝ հեռուստատեսություն, ռադիո, թատրոն, կինո, մի խոսքով՝ աշխարհ: Նա անգրագետ էր, բանաստեղծություններ բերանացի չգիտեր, բայց ամեն րոպե բառ էր ստեղծում՝ նոր, թարմ, դիպուկ, որտեղից էլ գտնում էր: Մի անգամ նրա հետ կարտոֆիլ էինք հավաքում՝ խոշոր, սպիտակ, ընտիր: Ամբողջ կույտ ես հավաքում, իսկ կույտը փլվում է, գլորվում սևահողի մեջ: Ես ասում եմ. «Մամ, նայիր, կարտոֆիլը երեխայի գլխի չափ է»: Իսկ նա. «Ի՞նչ ես ասում՝ երեխայի գլխի չափ: Դու ենիչա՞ր ես, թե՞ հանցագործ՝ երեխայի գլուխը քեզ համար կարտոֆի՞լ է: Կաթնակեր խոզուկների են նման, չէ՞»: Հասկանո՞ւմ ես՝ այս համեմատությամբ նա ամեն ինչ արտահայտեց՝ և՛ նորածին խոզի բարակ մաշկի նման կարտոֆիլի նուրբ վարդագույնը, և՛ այն, որ հնարավոր է ուտել, և՛ այն, որ ցրվում-փախչում են քո աչքի առաջ՝ ինչպես պստլիկ խոզուկները, և՛ գույնն արտահայտեց, և՛ շարժումը, և՛ մեծությունը: Եվ ասաց հընթացս՝ առանց պահ իսկ մտածելու: Նա չուներ լեզվական արգելքներ, կարծրատիպեր: Գյուղում ընդհանրապես առաջ շատ լավ էին խոսում: Կային, իհարկե, թոթովախոսներ, բայց նրանք լուռ էին մնում, կանգնում-ծխում էին: Իսկ եթե ինչ-որ մեկը կարևոր մտքեր ուներ, մյուսներն էին արտահայտում: Մայրս խոսքի մեջ ոչ միայն լեզու էր ստեղծում, այլև աշխարհի մոդելը, նա այնպես էր դերի մեջ մտնում,– տարբեր իրավիճակներ էր ստեղծում ու երեխային ցույց էր տալիս՝ տես, այսպիսի մարդիկ են լինում,– որ ինքն էլ սկսում էր ապրել այդ դերերով, և ոչ միայն մեզ աշխարհ էր բացում, այլև ընդլայնում էր իր միօրինակ կյանքը: Իսկ նրա միակ կրթությունը գյուղական այբուբենն էր...

– Միա՞կ: Բայց այնպիսի մարդիկ, ինչպես Ձեր մայրը, դարերով ստեղծված հնագույն քաղաքակրթության, մշակույթի մասն են: Մեզ հիմա մնացել է միայն այդ մշակույթի թանգարաններ բացել ու մեր զավակներին այնտեղ տանել: Գիտե՞ք ինչ եմ ուզում հարցնել. Դուք արդեն 30 տարի գրում եք գյուղի մասին, կառուցում եք Ձեր տապանը, ինչ-որ բան մեզ մնացե՞լ է:

– Մարդու տոհմը, նրա ընտանիքը՝ իմ կարծիքով աշխարհի հիմքը դա է, ինչը դեռ մնացել է: Մի ժամանակ,– երիտասարդ էի,– մորիցս ու իմ համագյուղացիներից նետվում էի դեպի ուրիշները՝ ավելի «կուլտուրականները», ավելի «կրթվածները»: Կարծում էի՝ բարեկամությունն ամեն ինչից վեր է: Իսկ

հետո սկսվեց վերադարձը դեպի տուն:
Ես քեզ դառը բան եմ ասելու: Դու արդեն իմ զավակների սերնդից ես, և եթե ոչ ես, էլ ով է դա քեզ ասելու... Ես, իմ հասակակիցները, կորած սերունդ ենք: Երբ կտրվեցին բոլոր կապերը մեզնից առաջ ապրածների հետ, ով մեզ բերել-հասցրել էր այս օրվան, մենք մտանք սուտ, հնարովի կյանք: Մենք դաստիարակվեցինք կեղծ արժեքներով (թեպետ մեզ ներշնչում էին, որ դրանք իսկական արժեքներ են): Մենք կյանք մտանք ոչ մեր խոսքով՝ մեզ ոչ միայն չէին սովորեցնում խոսել ու մտածել ինքնուրույն, այլև, ընդհակառակը, ով կարողանում էր այդ անել, հետ էին սովորեցնում, մեր շուրթերին ուրիշի բառեր էին դնում: Եթե ուշադիր լինես, կտեսնես, որ մեր գրականությունն էլ հիմնականում կեղծ է, դա ոչ թե կյանքի արտացոլում է, այլ գրականության գրականություն:
Կյանքում իմ առաջին գիտակցված զգացումը վախն էր: Ֆաշիստների ձեռքով զոհվելու վախը: Հետո՝ սովը: Չեմ խոսի այդ մասին մանրամասն, դա ինձ համար արգելված թեմա է, որովհետև այդ մասին հիմա գրում եմ: Միայն ասեմ, որ ես գիտեմ՝ ինչ է ձուն, ինչ հարստություն է մեկ ձուն: Նրա գեղեցկությունն ու արժեքավորությունը ես շարունակում եմ զգալ ինկուբատորական միլիոնավոր ձվերի համապատկերում:
Ինչ էր թաքնված իմ մանկական վախի, իմ սովի ետևը: Մեր տան պատին ընտանեկան լուսանկար էր կախված՝ գեղեցիկ շրջանակով: Մի անգամ ես պատահաբար բացահայտեցի, որ լուսանկարի տակ ստվարաթուղթ չէ, այլ ևս մի լուսանկար: Գիտե՞ս ում: Լիտվինովի: Արտաքին գործերի ժողկոմի: Գյուղական ակումբ էին ուղարկել քաղաքական ղեկավարների լուսանկարները և իմ հորը, իբրև հյուսնի, խնդրել էին շրջանակներ պատրաստել: Մինչ նա շրջանակներն էր պատրաստում, շրջկենտրոնից եկել էր լիազորված անձն ու ասել, որ Լիտվինովի նկարը կախել պետք չէ, նրան պետք է դեն գցել, իսկ նրա փոխարեն կախել մեկ ուրիշինը (չեմ հիշում՝ ում): Բայց Լիտվինովի նկարը սոսնձված էր լավ, ամուր ստվարաթղթի վրա, գյուղում չէիր ճարի, այդ պատճառով հայրս լուսանկարը դրել էր արդեն պատրաստի շրջանակի մեջ, իսկ վրայից՝ մեր լուսանկարը: Ո՞վ էր Լիտվինովը, ես այն ժամանակ չգիտեի, բայց քաղաքականությունը այդ կերպ ներծծվում էր մեր կյանքի մեջ: Քաղաքականություն էր, որ ուշ աշնանը, ցրտին, դպրոցական երեխաները շրջակա անտառներում մասուր էին հավաքում, ձեռքներն արնոտելով ու քերծելով, մինչև հիմա աչքիս առաջ է ոչ թե կույտը, այլ մասուրի մեծ, կարմիր բլուրը, որ մենք հավաքում էինք դպրոցի առաջ:

Քաղաքականությունն այնքան էր ներծծվել մեր կյանք, որ մենք նույնիսկ չէինք տեսնում, որ դա քաղաքականություն է: Դու հարցնում ես՝ ինչո՞ւ ու ինչպե՞ս խարխլվեցին տոհմական կապերը... 1945-ին սկսվեց Սիբիրի յուրացման քաղաքականությունը: Մշակվեց ժողովուրդների վերաբնակեցման ծրագիրը: Հո չէիր խնդրի, չէիր համոզի, որ Սիբիրը բնակեցնեն: Վերաբնակեցնել ու վերջ: Ամեն հանրապետություն ուներ վերաբնակեցման իր պլանը: Եվ Հայաստանը, որ այդքան ժողովուրդ էր կորցրել եղեռնի ժամանակ, պատերազմի ժամանակ, բռնությունների ժամանակ, պիտի Սիբիր ուղարկեր 300000 մարդ: Բայց այն ժամանակվա Հայաստանի դիկտատորը,– և նրան, չնայած ոճրագործություններին, մինչև հիմա շնորհակալ է մեր դժբախտ ժողովուրդը,– այդ դիկտատորը մտավ Ստալինի մոտ ու ասաց, որ 300000-ը չափազանց շատ է, այդպես չի կարելի: Եվ ժողովուրդների հորը համոզեց այդ թիվն իջեցնել մինչև 100000: Շնորհակալություն, որ ոչ 300000... Բայց ահա որտեղի՞ց հավաքես 100000: Յուրաքանչյուր շրջանի որոշակի թվաքանակ պարտավորեցվեց: Եվ եթե իմ փոքրիկ գյուղից, ուր բոլորը բարեկամներ են, ինչ-որ մեկն անպայման պիտի աքսորվեր, ի՞նչ էր մնում ինձ: Այնպես անել, որ աքսորեն ոչ թե իմ որդուն, այլ իմ եղբոր որդուն: Իսկ ի՞նչ կարող եմ ես անել: Ինչպես անեմ, որ իմ տուն չգան: Հասկանո՞ւմ ես: Այդ պայմաններում ի՞նչ հավատարմություն տոհմին...

– Իսկ ընտանի՞քը, ի՞նչ կատարվեց ընտանիքի հետ:

– Նախապապ ունեի, հորս պապը: Հովհաննես էր անունը: Երիտասարդ կին ուներ: Բռնեց նա կնոջ ձեռքը, աղջկան նստեցրեց էշին և գնաց՝ ուր աչքը կտրում էր: Որոշեց հող փնտրել, որտեղ կարող է հանգիստ ապրել: Գնացին նրանք, գնացին ու հասան մի մեծ անտառային բացատի: Իրենք իրենց ձեռքով տուն կառուցեցին: Ուրիշների հնձին էին գնում, հետո իրենք էլ այնքան անասունի տիրացան, որ իրենց հովիվն ունեցան: Հովհաննես պապի կինը վեց տղա ու երկու աղջիկ մեծացրեց: Նրանց համար եղավ բժիշկ, խոհարար, դերձակ, տերտեր, գիրք: Հետո նրանք երեխաներ ունեցան, թոռներ: Եվ այդ կինը դարձավ ամբողջ գյուղի տոհմապետը: Ես հաճախ եմ մտածում, որ մեր հերոսական էպոսը կանայք են ստեղծել: Նրանք նստում էին՝ քույրերը, ընկերուհիները, հարևանուհիները գորգ էին գործում, սպասում էին տղամարդկանց ու միմյանց պատմություններ էին պատմում իրենց, իրենց ամուսինների, սկեսրայրների մասին: Նրանք կարոտում էին իրենց ամուսիններին ու ամուսինների անունից սիրո երգեր էին հորինում իրենց կանանց, իրենց երեխաների, իրենց վերադարձի

մասին: Իսկ շուրջբոլորը վազում էին այդ կանանց փոքր երեխաները, և նրանց ներկայությամբ չէր կարելի լաց լինել ու սենտիմենտալ, լացակումած բառեր ասել, որովհետև տղամարդը պետք է առնական մեծանա: Ահա և ստեղծվում էր իսկական առնական, հերոսական պոեզիա: Որը ստեղծում էին կանայք:
Դե հիմա ասա, քո կարծիքով ինչ հույս կա, թե ժամանակակից, ամենակրթված, ամենադաստիարակված աղջիկը կդառնա տոհմապետ, կդառնա Եվա: Չկա այլևս այն կինը, որ ուսերին ընտանիք է պահում, ում շնորհիվ ընտանիքը մենակ անտառի բացատում ապրում է... Հիմա էպոս ստեղծող չկա...
– Իսկ ի՞նչ էր անում ընտանիքում հայրը:
– Տղամարդն ընտանիքում ՏԵՐ էր: Ինչ ես կարծում՝ ո՞րն է առաջին, բնական արժեքը: Ասեմ՝ առաջին բնական արժեքը ինքնուրույնությունն է: Տղամարդն առաջ միայն իր վրա էր հույսը դնում: Իր ձեռքով էր կերակրում ընտանիքը: Ոչ մեկին պարտական չէր, ոչ մեկից կախված չէր: Ինքը կերակրում էր, ինքը հագցնում էր, ինքը դաստիարակում էր իր երեխաներին ու տնօրինում էր իր ունեցվածքը, իր փողերը. այսքան փող՝ ուտելիքին, այսքան՝ երեխաների կրթությանը, այսքան՝ եկեղեցուն, այսքան՝ բարեգործությանը:
Իսկ մե՞նք, մենք մեր հողի վրա տե՞ր ենք: Ի՞նչ կարող ենք անել: Կերակրե՞լ մեր երեխաներին: Բայց մենք հացահատիկ չենք ցանում: Աշխատավա՞րձը: Իսկ ինչ կարելի է գնել 140, լավ, 200 ռուբլով: Պետությունն իր վրա է վերցրել մեր պարտականությունները՝ մեզ թողնելով սննդի ու հագուստի փող: Երեխաներին մեր փոխարեն կդաստիարակեն դպրոցում: Հացահատի՞կ ցանել՝ հաց կարելի է գնել խանութից: Մենք այնքան ենք ամեն ինչի համար հույսներս դրել պետության վրա, որ նույնիսկ բարեգործությունը, գթասրտությունը վստահել ենք նրան: Իսկ հետևա՞նքը՝ ոչ գթասրտություն, ոչ կրթություն, ոչ հիվանդների նորմալ խնամք չկա: Ահա արտակարգ իրավիճակ ստեղծվեց՝ Սումգայիթի փախստականները: Պետությունը նրանց կարիքները հոգա՞ց: Մենք ինքներս տնից տուն ընկանք՝ նրանց օգնելու համար հագուստ ու փող հավաքելու: Ահա մի ուրիշ օրինակ, կներես, եթե կոպիտ հնչի. կար Մարտիրոս Սարյանը՝ գեղեցիկ, սպիտակահեր, ազնվական ծերունի: Ինչպե՜ս էին նրան սիրում: Վախճանվեց: Մտածեցին՝ նա միայն պապ ու հայր չէր, նա պետական մարդ էր, պետությունը նրա համար հոգ կտանի: Տարան դիարան և ում պետք էր մի տասանոց չտվեցին, որ հոգ տանեն, հարկ եղածն անեն... Դագաղում նա պառկած էր մահվամբ այնպես այլախեղված, որ ազնվական գեղեցկությունից հետք չէր մնացել...

Նույնիսկ Աստծուն առանց հոր ու մոր չէին կարող ստեղծել: Նույնիսկ Հիսուս Քրիստոսը պիտի ծնողներ ունենար: Մեզանում լիարժեք ծնողներ եղել են և են նրանք, ում մեջ ապրում է սուրբ անվստահությունը՝ ես ինքս, ու միայն ես եմ դաստիարակում իմ երեխաներին, ես եմ նրանց կերակրում:
Որպեսզի ընտանիքում իրեն տեր զգա, գոնե պետք է կարողանա իր փողերը տնօրինել: Նա պետք է հաց, աշխատանք ու նորմալ աշխատավարձ ունենա:
– Իսկ որպեսզի տեր զգա պետությա՞ն մեջ:
– Ընտանիքը փոքր պետություն է: Պետության տերը նախ և առաջ պետք է հող ունենա, որի տերն ինքն է: Ես ինքնաթիռից տեսնում եմ՝ ինչի են վերածվել մեր լեռնալանջերը: Մեզ ստիպում էին խոր հերկ անել, իսկ հողաշերտը շատ բարակ էր, և նման հերկից հետո համարյա մի տարում անձրևները հողը լվանում-տանում էին, ու մնում էին լերկ լեռները: Ի՞նչ տեր եմ ես, եթե հողը բառացիորեն ոտքիս տակից գնում է:
Տերը պահապան է: Որպեսզի պահես, ինչ ուզում է լինի՝ հողը, բնությունը, ընտանիքը, պիտի ուժեղ լինես: Թույլը ոչնչացնում է՝ ներքին ալարկոտությունից, մտածել-ստեղծել չցանկանալուց: Մևանի ջրերը դաշտավայր թողնելը շատ ավելի հեշտ էր, քան մտածել-գտնելը՝ ի՞նչ կարելի է անել եզակի լիճը պահպանելու համար: Ուժեղն է պահում: Բայց երբ ինչ-որ մարդիկ ուզում են փոխարինել Աստծուն, երբ ասում են, որ միայն իրենք գիտեն ԻՆՉ Է ՊԵՏՔ, իսկ մյուսները պետք է ենթարկվեն, և այդ մյուսները դադարում են իրենց վրա դնել հույսները, ուժեղ մարդկանց թիվը նվազում է: Հա՞նձն եք առնում պատասխանատվությունը: Հիանալի է, առաջնորդեք մեզ: Մենք դադարել ենք ինքնուրույն աշխատել և մտածել, մենք սպասումով բացել ենք բերաններս, որ այնտեղ խոսք ու հաց դնեն: Եվ ահա՝ տեղերում ոչ մի նախաձեռնություն չկա: Մարդկային հնարավորությունները ճնշված են: Ամբողջ երկիրը գավառ է դարձել: Տես՝ հագիս այստեղ, Հայաստանում կարված հագուստ չկա: Կորել է գեղեցիկ, հարմար հագուստ, կոշիկ կարելու տարրական հմտությունը: Գավառը ոչինչ չի ստեղծում: Ոչնչի համար պատասխան չի տալիս: Գավառում չկա սեփական, ստեղծագործական միտք:
Մարիետա Շահինյանը գրում էր, որ 20-ական թվականներին Երևանը Վեյմար էր: Հեղափոխությունից հետո ամբողջ երկրագնդից Երևան էր եկել հայ մշակույթի սերուցքը: Իսկ հիմա մենք սովորելու ենք գնում Մոսկվա ու Լենինգրադ: Հին Թիֆլիսում կյանքը եռում էր. հյուրախաղերի էր գալիս

իտալական օպերան, նկարիչներ կային, թերթեր էին տպագրվում: Տեղական թերթերը արտատպում են կենտրոնականներին, երաժշտությունը բերում են (եթե բերում են) Մոսկվայից: Գավառը միայն մի ելք ունի՝ մի կողմի վրա – այստեղից Կենտրոն: Բոլոր մյուս կողմերից մեզ պատեր են շրջափակում, սահմաններ, և թարմ օդ չկա: Գավառը ճահճանում է: Կենտրոնը գավառից քամում է բոլոր տնտեսական ու մշակութային ուժերը, իսկ նրանք, ովքեր մնում են, Կենտրոնի համար կորցնում են իրենց արժեքը:
Մենք ուզում ենք ապրել մեր սեփական կյանքը, մենք ուզում ենք սեփական կարծիքի իրավունք ունենալ, երբեմն Կենտրոնի կարծիքից տարբեր:
...Պատերազմից հետո Հայաստան եկան շատ հայրենադարձներ: Նրանք վերադարձել էին, որ ընդմիշտ մնան: Իսկ 70-ական թթ. նրանցից շատերը հետ գնացին: Ինչո՞ւ: Որովհետև զզվել էին կյանքը քարշ տալուց: Այդ մենք էինք ամբողջ կյանքը այդպես ապրել, իսկ նրանք գիտեին, թե ինչ բան է նորմալ ապրելը: Եթե մարդիկ ուզում են ապրել առանց մանր-մունր խնդիրների – ԲՆԱԿԱՆ է: Վերջապես պետք է դա հասկանալ: Մենք այսքան տարի ապրել ենք ինչ-որ կերպ՝ էնտուզիազմն ու հոգևորը շահարկելով, իսկ հիմա այդ բարձր իդեալներն արժեզրկվել են: Մարդկանց հոգնեցրել են հովիվները, որոնց այսօր երկրպագում են, իսկ վաղը պարզվում է, որ նրանք մարգարե չէին: Հովվի ու մարգարեի դերը արժեզրկվել է: Նրանց չեն հավատում, նրանց չեն ուզում – ոչ լավերին, ոչ վատերին՝ չեն ուզում: Մարդիկ ուզում են ապրել իրենց կյանքով, իրենց խելքով:
Հանցավոր մտածողություն է՝ թող գնան, մեզ ավելի շատ կմնա:
Իրենց ժամանակին հայրենադարձները բերեցին կուլտուրայի տարրեր, այդ կուլտուրան ավելի զարգացած էր, քան մերը: Մեր կենցաղային կուլտուրան բարձրացավ նրանց շնորհիվ:
Նրանց գնալով, մենք, իհարկե, չենք կորցնի այդ կենցաղային նյութական մակարդակը: Բայց նրանցից յուրաքանչյուրի գնալով անձամբ ես՝ Հրանտ Մաթևոսյանս – մարդ, հայ, գրող՝ կորցնում եմ իմ տան, իմ հայրենիքի, իմ մի մասը: Ես աղքատանում եմ: Ես վատ տեր եմ, եթե նրանք իմ տանը իրենց անհարմար էին զգում, նրանք, որ եկել էին սիրով ու բարությամբ, այստեղ ընդմիշտ մնալու հույսով:
– Իսկ գիտեք, Հրանտ Իգնատովիչ, Դուք փոխվել եք: Երբ ես առաջ գալիս էի, Դուք «տպագրության» համար տհաճությամբ էիք խոսում, լրագրողները գտնում

էին, որ Ձեզ հետ դժվար է խոսել, հեռախոսին հազվադեպ էիք մոտենում, ընթերցողների հետ հանդիպումներից խուսափում էիք: Իսկ հիմա, ես գիտեմ, մեր զրույցը միակը չէ այս տարի կենտրոնական մամուլում, ինչպես տեսնում եմ, համարյա չեք թաքնվում:

– Ասեմ… իմ սերունդն արդեն հայրական տարիքում է: Ես մեր Միությունը, այս աշխարհը ընդունում եմ իբրև իմ տունը, իսկ իմ սերունդն ու ինձ՝ իբրև հայր: Այո, մենք իրոք այնքան ապահովված չենք ապրում, իսկապես ոչ բոլորս ունենք լավ աշխատանք... Բայց մենք այլևս իրավունք չունենք նեղանալու, ինչպես չի կարող նեղանալ ընտանիքի հայրը իր տան աղքատ սեղանից: Նախ՝ մենք էլ ենք մեղավոր: Երկրորդ՝ մեր ժամանակը եկել է այդ տուն մտնել ինչ-որ դրական լիցքով: Մենք մանկությունից երգել ենք ուրիշի ձայնով: Ժամանակն է սեփական ձայն ունենալու ու սեփական խոսքն ասելու:

Հովհաննես Թումանյանը մի պատմվածք ունի. 1895 թվին ցեղասպանության ժամանակ Սասունից փախստականները եկել են Էջմիածին կաթողիկոսի մոտ: Նրանց հետ մի ծեր հոգևորական կար, որի ամբողջ ընտանիքը կոտորել էին՝ տասնմեկ մարդ, իսկ նա արդեն 80 տարեկան էր: Նա հարցնում է կաթողիկոսին՝ հիմա ես ի՞նչ անեմ: Եվ կաթողիկոսը պատասխանում է. «Իսկ ե՞ս ինչ անեմ, Սասունում միայն քո տանը ես կորցրել եմ տասնմեկ մարդ: Իսկ ինչքա՞ն եմ կորցրել Զեյթունում, Կոստանդնուպոլսում: Նրանք բոլորը իմ ընտանիքն են»: Երբ ես 25 տարեկան էի ու գլխիս հայր ունեի, կարող էի ինձ թույլ տալ ընդվզել ու բունտ խաղալ: Հիմա չի կարելի: Թեպետ գրականությունը մեզ մոտ երկար տարիներ ստորացվել էր մինչև քաղաքականության ծառայի դերը, մենք պիտի կյանք մտնենք իբրև հայրեր, ասես ոչինչ չի եղել: Մենք պետք է այս քաոսից, հուսահատությունից, բեկորներից վերականգնենք աշխարհը, վերականգնենք էթիկան: Մեզ համար գրականությունն արդեն հայրություն է:

Գրի առավ Մարինա ԱՐԻՍՏՈՎԱՆ

«Սեմյա» («Семья», Москва), 29.06.1988 թ.